

## ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱԱԾ սահմանափակ գորքեր, կապիտան  
Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր  
իրավագիտության ամբիոնի հայցորդ

### ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների սահմանափակումն անձի սահմանադրական կարգավիճակի հիմնարար չափանիշն է: Առանց սահմանափակման գործնականում չեն կարող իրացվել մարդու իրավունքները, և որոնք միայն հռչակագրի դեր կխաղան: Փաստորեն սահմանափակումները հիմք են հանդիսանում առանձին հիմնական իրավունքների ճանաչման համար:

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, այսինքն անհատի ազատությունների սահմանների որոշումը հասարակությունում և պետությունում անձի և պետության փոխհարաբերությունների կարևորագույն կողմերից է: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անհատի, հասարակության և պետության շահերի հարաբերակցության հայեցակարգային մոտեցումը: Այն կարճ և խտացված ձևով արտահայտված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով: Մարդու արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Սահմանադրական իրավունքի գիտությունը առաջարկում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումների ավելի տարբերակված բնորոշումներ: Ընդհանրացնելով հեղինակների տեսակետները՝ կարելի է առանձնացնել հետազոտվող հիմնախնդրի նկատմամբ լայն և նեղ մոտեցումները:

**Հիմնարար քառեր** - մարդ, իրավունքներ, ազատություններ, սահմանափակում, Սահմանադրություն, կարգավիճակ:

Սահմանադրության, որպես պետության հիմնական օրենքի, հիմնական առաքելություններից է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների ու դրանց իրացման սկզբունքների ամրագրումը: Ներկայումս մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները դիտարկվում են որպես սահմանադրական կարգավորման ավանդական և անհրաժեշտ օբյեկտ<sup>1</sup>: «Մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները կարևոր տեղ են գրավում հիմնական օրենքում և որոշում են անձի անհատական ինքնավարության ոլորտը և ամրագրում պետության և քաղաքացու փոխադարձ պարտավորությունները»<sup>2</sup>:

Իրավունքների և ազատությունների սահմանադրական ամրագրումն անհրաժեշտ է նրա համար, որպեսզի մարդուն պաշտպանեն պետության կամայականություններից և կանխեն օրենքների և այլ իրավական ակտերի ընդունման միջոցով իրավունքների ու ազատությունների խախտումը<sup>3</sup>: Յուրաքանչյուր մարդու ազատությունը ձգվում է դեպի այն սահմանը, որտեղից սկսվում է մյուս մարդկանց ազատությունը:

Ազատությունը կարող է դառնալ ճշմարիտ իրականություն միայն այնպիսի մոտիկ արժեքների հետ փոխահարաբերությունում, ինչպիսիք են բարոյականությունը, մշակույթը, ընտրության հնարավորությունը: Ազատությունը ունի երկու կողմ՝ ազատությունը՝ որպես մարդու հոգեբարոյական աճի արդյունք, և ազատությունը՝ որպես քաղաքակրթության նվաճում, նրա արտաքին դրսևորումը: Ազատության սահմանափակումը շատ բանով պայմանավորված է նրանով, որ բարոյականության գաղափարները ոչ բոլոր անհատների համար հեղինակություն ունեն: Պահանջելով անսահման ազատություն՝ հասարակության ներկայացուցիչները անցնում են ազատության և բարոյականության սահմանը: Արդիական են հռոմեական հռետոր Մարկոս Ֆաբիոս Քվանտիլիանի խոսքերը. «Ազատությունը և անբարոյականությունը մեկը մյուսին կատարելապես հակընդդիր երևույթներ են»<sup>4</sup>: Ուստի ժողովրդականացման գործընթացի ժամանակ բարոյականությունը պետք է ակտիվորեն գործի, որպես նորմատիվ կարգավորիչ: Անժխտելի է այն փաստը, որ առանց անձնական ազատության չի կարող լինել բարոյական զարգացում:

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդը, ապրելով հասարակության մեջ, բնական է, այնտեղ էլ զարգացնում է իր ազատությունը և բարոյականությունը: Բարոյական շահը, որը պահանջում է անձնական ազատություն, նաև պահանջում է, որ անձնական ազատությունը չպետք է հակասի հասարակության գոյության պայմաններին: Անձնական ազատության համաձայնեցումը հասարակական ինքնապահպանության հետ պահանջում է ոչ միայն բարոյական կատարելիության անառարկելի գաղափարի (իդեալի) հաստատում, այլ նաև ենթադրում է իրավական սահմանափակումների սահմանում, որոնք պահանջում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից: Այս համատեքստում արդիական է նաև հոլանդացի մեծ փիլիսոփա Սպինոզայի ազատության բնորոշումը. «Ազատությունը գիտակցված անհրաժեշտությունն է»<sup>5</sup>: Անհրաժեշտություն, որն իրականացվում է որպես ընտրություն անձնական ազատության և հասարակական բարոյականության, ավանդույթների, սոցիալական համակեցության կանոնների միջև: Մեր կարծիքով, միայն իրավական կարգավորումն է ժամանակավորապես վերացնում ազատության և բարոյականության միջև եղած հակասությունները: Ինչ օրինական է, այն բարոյական է, պայմանով, որ օրենքը ևս լինի բարոյական:

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների սահմանափակումն անձի սահմանադրական կարգավիճակի հիմնարար չափանիշն է: Մասնավորապես, անձի սահմանադրական կարգավիճակի սկզբունքների հետ (օրինակ, ազատությունների և պատասխանատվության, իրավունքների և պարտականությունների համակցման) սերտ կապը ենթադրում է այն, որ իրավունքների սահմանափակումը ներգործում է անձի սահմանադրական կարգավիճակի այլ տարրերի վրա: Առանց սահմանափակման գործնականում չեն կարող իրացվել մարդու իրավունքները, և դրանք միայն հռչակագրի դեր կխաղան: Փաստորեն սահմանափակումները հիմք են հանդիսանում առանձին հիմնական իրավունքների ճանաչման համար: Նախ և առաջ այն վերաբերում է հիմնական անձնական և քաղաքական իրավունքներին, որոնք պետության ոտնձգումներից պաշտպանելու գործառույթի դեր են կատարում: «Սահմանափակում» հասկացությունը դրսևորվում է իրավասուբյեկտությունում, քաղաքացիությունում, երաշխիքներում, որոնք իրավունքների, պարտականությունների իրացման պայմաններն են և նախորոշում են դրանց այս կամ այն ծավալը:

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, այսինքն՝ ան-

հատի ազատությունների սահմանների որոշումը հասարակությունում և պետությունում անձի և պետության փոխհարաբերությունների կարևորագույն կողմերից է՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված, անհատի, հասարակության և պետության շահերի հարաբերակցության հայեցակարգային մոտեցումը: Այն կարճ և խտացված ձևով արտահայտված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով: «Մարդու արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

ՀՀ Սահմանադրության տեքստում ներառվել է հատուկ սահմանադրական եզրույթ՝ «մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակում»: Այս եզրույթի բովանդակությունը բավականին առաձգական և անորոշ է: Ժամանակակից սահմանադրական իրավունքի գիտությունում չկան դրա միասնական ըմբռնումը, այդ հասկացության հստակ բնորոշումը, նրա էության, սահմանադրական գաղափարների և սկզբունքների տեսանկյունից վերլուծությունը:

Սահմանադրական վերոհիշյալ եզրույթի էության և նշանակության պարզաբանման համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պետության, հասարակության և անհատի (մարդու) փոխհարաբերությունների հայեցակարգը:

Պետական իշխանությունը իր իրացման գործընթացում իրեն սահմանափակում է մարդու իրավունքներով: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ պարբերությունում ամրագրված է. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք»: Իրավունքներում և ազատություններում արտահայտվում է որոշակի սահմանադրական կոնսենսուս և նրա հենքն է:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանները որոշելիս ՀՀ Սահմանադրությունն օգտվում է «սահմանափակում» եզրույթից (ՀՀ Սահմանադրության 43-44-րդ, որպես ընդհանուր հիմնարար դրույթներ, ինչպես նաև 23-25-րդ, 27,28-30-րդ, 30.1, հոդվածները, որպես այդ սահմանափակումների կոնկրետ դրսևորումներ): «Սահմանափակում» սահմանադրական եզրույթը ծագել է սահմանափակում բառից, որը նշանակում է զսպել որոշակի պայմաններ

www.lawinstitute.am

րով, դնել ինչ-որ շրջանակներ, սահմաններ:

Իրավունքի տեսությունում իրավական սահմանափակումը բնութագրվում է որպես հակաօրինական արարքի զսպում, որը պայմաններ է ստեղծում սուբյեկտի և հանրային շահերի բավարարման, դրանց պահպանման ու պաշտպանության համար՝ իրավունքի մեջ սահմանելու այն շրջանակները, որոնց սահմաններում սուբյեկտները պետք է գործեն: Դա անձի գործունեությունում որոշակի հնարավորությունների բացառումն է<sup>6</sup>:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքերը և ազատությունները արտահայտում են նրա էությունը՝ կյանքը, ազատությունը, արժանապատվությունը, բարոյականությունը, և անօտարելի են: Դրա հետ մեկտեղ, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների բացարձակությունը չի նշանակում դրանց անսահմանափակություն և ամենաթողություն: Յուրաքանչյուր ոք, օգտվելով իր իրավունքներից, պարտավոր է ելնել այն բանից, որ նման իրավունքերով օժտված են նաև հասարակության մյուս անդամները: Ուստի «հիմնական իրավունքների ապահովման տեսության և պրակտիկայի առանցքային հարցը ոչ այնքան այն է, թե ինչ իրավունքներ են երաշխավորում մարդուն և քաղաքացուն, այլ այն, թե որոնք են այդ հիմնական իրավունքների թույլատրելի սահմանափակումները»<sup>7</sup>:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը ՀՀ իրավունքի միջոցառումային ինստիտուտ է և ուսումնասիրվում է տարբեր տեսանկյուններից: Առանձնահատուկ հնչեղություն մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ձեռք է բերել սահմանադրական իրավունքում, քանի որ այն հիմնարար նշանակություն ունի ողջ իրավասահմանափակիչ օրենսդրության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը և դրա սահմաններն իրավագիտության և իրավական համակարգի առավել բարդ և վիճահարուց հարցերից է ողջ աշխարհում:

Եթե դիմենք իրավունքի տեսության օգնությամբ, որպես ունիվերսալ գիտության, որն իր մեջ պարփակել է ամբողջությամբ վերցրած իրավագիտության հասկացությունների և կարգերի ողջ ապարատը, ապա չենք գտնի «իրավունքի սահմանափակում» հասկացության միասնական սահմանում, ինչը խանգարում է դրա հետագա զարգացումը սահմանադրական իրավունքում:

Իրավունքի տեսության շատ գիտնականների

կարծիքով սահմանափակումները կապված են հասարակությունում մարդու ազատության սահմանների որոշման հետ:

Տեսության բնագավառի շատ գիտնականների կարծիքով, սահմանափակումները կապված են հասարակությունում մարդու ազատությունների սահմանների որոշման հետ՝ ցանկացած ձևով նրա բարիքներից օգտվելը նվազեցնելով: Օրինակ, Վ.Ս. Ներսեսյանցը նշում է, որ սահմանափակումները սուբյեկտիվ իրավունքի առարկա հանդիսացող բարիքներից օգտվելիս, սանկցիավորված ժամանակավոր կրճատում կամ նվազեցում է, ինչպես ըստ էության, այնպես էլ ժամանակի առումով<sup>8</sup>: Ընդ որում սահմանափակվում է ոչ թե բուն բարիքը, այլ անձնական կամ հասարակական բարիքի նկատմամբ ունեցած պահանջի պայմանները, այդ բարիքից օգտվելու տևողությունը, լիարժեքությունը և որակը, ինչպես նաև այդ իրավունքները և ազատությունները դրվում են որոշակի սահմանների, շրջանակների մեջ կամ ինչ-որ կերպ հավասարակշռվում են իրավունքի սուբյեկտների տարբեր տեսակի շահերը և բարիքները:

Դրա հետ մեկտեղ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների սահմանափակումը այդ իրավունքները և ազատությունները որոշակի շրջանակների մեջ առնելն է կամ էլ իրավունքի սուբյեկտի (մարդ, քաղաքացի) տարաբնույթ շահերի և բարիքների հավասարակշռումը:

Այլ կարծիքի է Ա.Վ. Մալկոն: Դիտարկելով սահմանափակումները որպես իրավական երևույթ՝ հեղինակը գտնում է, որ սահմանափակումները սահմանադրությունում և օրենքներում սահմանված սահմաններն են, որոնց շրջանակներում սուբյեկտները պետք է գործեն՝ օգտագործելով իրենց իրավունքները և ազատությունները: Նման սահմանները «դրվում են» պարտականությունների և արգելքների, կասեցումների և պատասխանատվությունների օգնությամբ<sup>10</sup>:

Մ.Մ. Ուտյաշևը գործառական մտեցման տեսանկյունից մարդու իրավունքների սահմանափակումը դիտում է որպես պետության օրինական գործունեություն, որն ուղղված է իրավունքների և ազատությունների իրականացման համար որոշակի սահմանների ամրագրելուն, նրա պահպանիչ գործառությունների կատարմանը: Նման սահմանափակումների նպատակները կարող են լինել կոնֆլիկտներ ծնող գործոնների, ծայրահեղականության և ահաբեկչության մեկուսացումը<sup>11</sup>:

Վ.Տ. Տոմինը գտնում է, որ անձի իրավունքների սահմանափակումը և ինքնասահմանափակումը պետության և հասարակության գոյության անհրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ժեշտ պայմանն է: Մի քաղաքացու ոչնչով չսահմանափակված իրավունքների և ազատությունների իրացումը անխուսափելիորեն կարող է հանգեցնել այլ քաղաքացիների իրավունքների և ազատությունների խեղմանը, նրանց միջև բախումներին: Իրենց կողմից ստանձնած պարտականությունների արդյունավետ կատարման համար պետությունը և հասարակությունը պետք է դառնան իրավունքի ինքնուրույն, իսկ միգուցե նաև ազատությունների սուբյեկտներ: Բոլորի համար իրավունքների լավագույն (ոչ թե առավելագույն) ապահովումը հնարավոր է միայն յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների սահմանափակման պայմաններում<sup>12</sup>:

Վ. Ա. Չետվերնիկը գտնում է, որ. «...ազատության չափի որոշումը սահմանադրությամբ կոչվում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների կարգավորում և դրանց սահմանափակում: Կարգավորում հասկացությունը այդ համատեքստում ավելի լայն է քան սահմանափակումը: Կարգավորումը ներառում է ոչ միայն ազատության սահմանների որոշում, այլև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքներ»<sup>13</sup>:

Ինչպես տեսնում ենք, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումների վերաբերյալ համընդհանուր տեսական պատկերացումները այնքան էլ միանշանակ չեն և հիմնականում հանգում են նրան, որ սահմանափակումը իրավական կարգավորման անհրաժեշտ եղանակ է:

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի: *Առաջին խումբը* իրավունքների և ազատությունների սահմանափակման՝ որպես միջոցի ընկալումն է: Գրան կարելի է դասել, օրինակ, Ա.Վ. Դոլժնիկովայի տեսակետը, ով գտնում է, որ հիմնական իրավունքների տակ պետք է հասկանալ բնական, սոցիալական և հոգևոր պատճառներով պայմանավորված սահմանադրաիրավական միջոցների համակարգը, որը որոշում է դրա կրողին, նորմատիվ բովանդակության ոլորտն ու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների իրացման կարգը: Այն թույլատրելի է սահմանափակել միայն ձևական ու նյութական չափանիշների համապատասխանության դեպքում<sup>14</sup>:

Տվյալ հիմնախնդրին *երկրորդ մոտեցումը* կայանում է սահմանափակումների՝ որպես իրավունքների և ազատությունների նեղացումների հասկացության մեջ<sup>15</sup>: Բացի Ա.Վ. Աշիսմիսայի վերը բեր-

ված տեսակետի՝ կարելի է բերել նաև այլ մոտեցումներ:

Լ.Լ. Բելոմեստնիխը բնորոշում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումները որպես օրենսդրորեն սանկցիավորված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանների, շրջանակների նեղացում և նրանց որոշակի բարիքների նկատմամբ պահանջ<sup>16</sup>:

Վ.Ի. Գոյմանը իրավունքների (ազատությունների) սահմանափակումը բնութագրում է, որպես օրենքով նախատեսված հիմքերին համապատասխան և սահմանված կարգով իրականացվող ծավալի նեղացում, իսկ, Մ.Ա. Նագոռնայան՝ որպես իրավունքի նորմի բովանդակության և ծավալի փոփոխություն<sup>17</sup>:

Այս մոտեցման շրջանակներում բավականին ամբողջական բնորոշում է տալիս Ա.Ա. Պոդմարյովը՝ այն օրենսդրությամբ սահմանված մարդու (քաղաքացու) իրավունքների և ազատությունների իրացման սահմաններն են, որոնք արտահայտվում են արգելքներով, ներթափանցումներով, պարտականություններով, պատասխանատվությամբ, որոնց գոյությունը պատճառաբանված է սահմանադրորեն:

Մ.Ա. Ալեքսեևը ևս կիսում է այդ մոտեցումը<sup>18</sup>:

Երրորդ մոտեցման համաձայն՝ իրավունքների և ազատությունների սահմանափակումը դրանցից որոշակի մասհանումն է:

Օրինակ, Բ.Ս. Էրզեևը տալիս է իրավունքների բուն սահմանադրաիրավական իմաստով սահմանափակման հետևյալ բնորոշումը. «Դա Սահմանադրությամբ թույլատրվող և դաշնային օրենքով սահմանված մարդու և քաղաքացու կարգավիճակից կատարվող բացառում է, բացի դրանից, որպես հիմնական իրավունքների սահմանափակում կարելի է դիտել նաև հիմնական իրավունքների և ազատությունների նորմատիվ բաղկացուցիչը կազմող շրջանակից իրավագործությունների մի մասի առգրավումը»<sup>19</sup>:

Նման մոտեցմանը դժվար է համաձայնել: Ինչպես նշել է Վ.Ի. Կրուսը. «Սահմանափակում հասկացությունը կարելի է մեկնաբանել երկու իմաստով. լայն առումով՝ որպես սեռային հասկացություն և նեղ՝ որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների միջնորդավորման յուրահատուկ ձև: Հենց նեղ առումով սահմանափակման հետ են կապվում մարդու իրավունքների բովանդակության փոփոխության հետ, որը չպետք է վերաբերի նրա էությանը: Իսկ իրավունքից մասհանում նշանակում է նրա էության

www.lawinstitute.am

փոփոխություն...»<sup>20</sup> :

Ուսումնասիրելով իրավունքների և ազատությունների հասկացության վերաբերյալ գիտական մոտեցումները՝ պետք է նշել, որ բնական ազատությունը ի սկզբանե բացարձակ է, որով մարդը օժտված է ի ծնե և որը կարող է ավարտվել նրա մահով:

Դրա հետ մեկտեղ այն ձեռք է բերում սահմանափակ բնույթ այն բանի հետևանքով, որ անհատը բնակվում է իրեն նման էակների շրջանում, որտեղ նրանց շահերը և պահանջմունքները տարբեր են, երբեմն դրանք մտնում են խորը հակասությունների մեջ:

Նման պայմաններում, երբ յուրաքանչյուրը կարող է իրացնել իր բացարձակ ազատությունը, անհնարին է համընդհանուր սոցիալական նպատակներին հասնելը, առանց որոնց գոյություն չի կարող ունենալ հասարակությունը, ինչպես նաև մարդը:

Սահմանափակումը դիտարկվում է որպես հրամայական, սահմանադրական դրույթների վրա հիմնված, նրա սահմանված նպատակների հիման վրա ձեռնարկված և նրա պահանջներին համապատասխան որոշվող սահմանադրական իրավունքի այս կամ այն սուբյեկտի հնարավորությունների նորմատիվ նեղացում:

Բազմաթիվ տեսակետների առկայությունը հիմնականում պետք է գնահատել դրական գիտական առումով, քանի որ այն արտահայտում է գիտական

մտքի ազատությունը: Մյուս կողմից այն փաստը, որ իրավագիտության մեջ քիչ են բուրքի կողմից ճանաչված բնորոշումները, այն հիմնական թերությունն է, ինչը սահմանափակումների միասնական մեկնաբանման բացակայության պատճառով պրակտիկայում կարող են հանգեցնել մարդու իրավունքների և ազատությունների իրական խախտումների:

Կարևոր է ընդգծել, որ սահմանափակումների տարբեր դոկտորիալ մեկնաբանություններն իրենց դրոշմն են դրել օրենսդրության վրա, ինչի արդյունքում այն հանգեցնում է իրավասահմանափակիչ նորմերի իրավաբանական չկայացմանը: Սահմանափակումների միասնական ըմբռնման բացակայությունը բազմիցս փաստվել է իրավաբանական գրականությունում, նշվել է նաև այդ խնդրի ընկալման դոկտրինալ հիմնախնդիրը<sup>21</sup>:

Այս բազմազանության հիմքի վրա սահմանադրական իրավունքի գիտությունը առաջարկում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումների ավելի տարբերակված բնորոշումներ: Ընդհանրացնելով հեղինակների տեսակետները՝ կարելի է առանձնացնել հետազոտվող հիմնախնդրի նկատմամբ լայն և նեղ մոտեցում:

<sup>1</sup> Տե՛ս Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность. М., 2005. С. 9.

<sup>2</sup> Տե՛ս Эбзеев Б.С. Конституция. Демократия. Права человека. М., 2007. С. 25.

<sup>3</sup> Տե՛ս Малько А.В. Стимулы и ограничения в праве. М., 2005. С. 59.

<sup>4</sup> Տե՛ս Борзунов А. А. К вопросу о политических взглядах Квинтилиана // Политическая структура и общественная жизнь древнего Рима: Проблемы античной государственности. Ярославль, 1993. С. 66-76.

<sup>5</sup> Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Երևան-1975, էջ 389-390:

<sup>6</sup> Տե՛ս Малько А.В. Стимулы и ограничения в праве. М., 2005. С. 60.

<sup>7</sup> Տե՛ս Конституционные права в России: дела и решения: Учебное пособие / Отв. ред. А. Шайо. М., 2002. С. 56.

<sup>8</sup> Տե՛ս Пчелинцев С.В. Концептуальные подходы к формированию теории ограничения прав и свобод граждан на современном этапе // Конституционное и муниципальное право. 2006. N 5. С. 23.

<sup>9</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Права и свободы человека как фактор общеевропейского сотрудничества и интеграции / В сб. «Права человека и политическое реформирование». Отв. ред. Лукашева Е.А. М., 1997.

<sup>10</sup> Տե՛ս Малько А.В. Стимулы и ограничения в праве. Саратов, 1994. С. 5.

<sup>11</sup> Տե՛ս Утяшев М.М. К вопросу об ограничении прав человека //Правовая политика и правовая жизнь. 2005. N1. С. 113-114.

<sup>12</sup> Տե՛ս Томин В.Т. Принципы, пределы, основания ограничения прав и свобод человека и гражданина по российскому и международному праву. Материалы “круглого стола” журнала Государство и право// Государство и право.1998. N 7. С.26.

<sup>13</sup> Տե՛ս Четвернин В.А. Конституция Российской Федерации. Проблемный Комментарий. М. 1997. С.30.

<sup>14</sup> Տե՛ս Докжникова А.В. Конституционные критерии допустимости ограничения основных прав человека и гражданина по российскому праву, Тюмень 2003, авторф. Канд. Дисс. С. 12.

- <sup>15</sup> Տե՛ս Աшимихина А.В. Конституционно правовой механизм ограничения прав и свобод человека и гражданина в Российской Федерации. Волгоград 2009. С.17.
- <sup>16</sup> Տե՛ս Беломестных Л.Л. Ограничение прав и свобод человека и гражданина (Теоретический аспект): Дис.... канд. юрид. наук. М., 2003. С. 15-23.
- <sup>17</sup> Տե՛ս Гойман В.И., Нагорная М.А. О понимании советского права // Советское государство и право. 1979. N7.
- <sup>18</sup> Տե՛ս Алексеев С.С. Восхождение к праву. Поиски и решения: Монография. М., 2001. С.673-674,727.
- <sup>19</sup> Տե՛ս Эбзеев Б.С. Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. М. 2005. С. 229-230.
- <sup>20</sup> Տե՛ս Красс В.И. Выступление на “круглом столе”// Государство и право. 1998. N8, С. 62.
- <sup>21</sup> Տե՛ս Лапаева В.В. Проблема ограничения прав и свобод человека и гражданина в Конституции РФ (опыт доктринального осмысления) //Журнал российского права. 2005. N 7.С. 13; Хабриева Т.Я. Чиркин В.Е. Теория современной конституции.- М.: Норма, 2005. С.146.

**Сурен Саргсян**

Пограничные войска СНБ РА,  
соискатель кафедры общей юриспруденции  
Ереванского университета “Гладзор”

#### РЕЗЮМЕ

##### *Понятие и необходимость ограничения основных прав и свобод человека*

Ограничение прав и свобод человека и гражданина базовый стандарт конституционного статуса личности. Без ограничений практически нельзя осуществлять права человека и они будут иметь декларативное значение. Фактически ограничения являются основой для признания отдельных основных прав. Ограничение прав и свобод человека и гражданина, т.е. определение границ свобод личности в обществе и в государстве является одним из важных стороне взаимоотношений между государством и личностью. В Конституции Республики Армения закреплено концептуальное отношение к соотношению интересов личности, общества и государства. Это в концентрированном виде выражено в статье 3 Конституции Республики Армения. “Человек, его достоинство, основные права и свободы являются высшей ценностью”. Наука о конституционном праве предлагает более дифференцированные определения ограничений прав и свобод человека и гражданина. Обобщая точки зрения авторов можно выделить широкий и узкий подход к изучаемой проблеме.

**Ключевые слова:** человек, права, свободы, ограничение, Конституция, статус.

**Suren Sargsyan**

Border troops of SNS RA,  
Post graduate student of Law department, Yerevan Gladzor University

#### SUMMARY

##### *Concept and need of restriction of basic rights and freedoms of the person*

Restriction of the rights and freedoms of the person and citizen basic standard of the constitutional status of the personality. Without restrictions it is practically impossible to carry out human rights and they will have declarative value. Actually restrictions are a basis for recognition of separate basic rights. Restriction of the rights and freedoms of the person and citizen, i.e. delimitation freedom persons in society and in the state is one of important to the party of relationship between the state and the personality. In the Constitution of the Republic of Armenia and the conceptual relation to a ratio interest of the personality, society and state is fixed. It in the concentrated look is expressed in article 3 of the Constitution of the Republic of Armenia. “The person, his advantage, basic rights and freedoms are the supreme value”. The science about a constitutional right offers more differentiated definitions of restrictions of the rights and freedoms of the person and the citizen. Generalizing the points of view of authors it is possible to allocate broad and narrow approach to the studied problem.

**Keywords:** person, rights, freedoms, restriction, Constitution, status.